

քը զարգացնելու համար: Եթէ նա այդ բանին ձեռնարկում է, նա ուրեմն ենթադրու- մէ թէ ներքին կեանքը կարող է կերպարանա- փոխուել: Թէ այդ ներ- քին կեանքը ներգործու- թեան ենթարկվում է, կամ թէ զարգանալու ընդունակ է: Սակայն կրթութեան այս կարե- լիութիւնը անսահման չէ, այլ հասնումէ մինչ այն սահմանը, ուր սա- նիկի ներքին կեանքը ստանում է մի հաստա- տուն և փակուած կեր- պարանք, և այնուհետև թէպէտ և նա կարող է իւր ներքին զարգացումը դեռ ևս անձամբ շարու- նակել, բայց այլ ես են- թակայ չէ որ ներ- գործութեանց:

Bestand hat, welche äus- sern Einflüssen gegenüber beharrt.

Թաղրումէ որ այդ ներ- քին կեանքը կերպա- րանափոխուելու ընդու- նակ է, թէ այդ կեանքը արտաքին ներգործու- թեանը տեղի է տալիս, թէ դեռ ևս չի ստացել հաստատուն և իւր մէջ կանոնաւորութիւն պատկեր, և թէ դեռ ևս զարգա- նալու ընդունակ է բայց և միւս կողմից ենթա- դրումէ, որ հնարաւոր է, սանիկի ներքին կեան- քին վերջապէս մի այն- պիսի կերպարանք տալ, որ կարողութիւն ունե- նայ, արտաքին ներգոր- ծութիւններին ընդդի- մանալ:

Վասակ Պապաջանեանց

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ Հոկտեմբեր 26 ին ի Տէր հանգեալ. Պատրիարքն Հայոց
 4. Պօլսոյ Տէր Ներսէս Արքազան Արքեպիսկոպոս:
 4. Պօլսոյ Ազգային Վարչութիւնը մի ամիս սուգ պահել որոշեց
 և ընթացիկ գործերի հսկողութիւնը յանձնեց պատրիարքական
 փոխանորդին, որ պարտաւոր էր մի և նոյն ժամանակ իբրև գոր-
 ծադիր իշխանութիւն՝ Պատրիարքի ընտրութեան նախապատ-
 րաստութիւնները հոգալ: Ազգային Վարչութիւնը այսպիսով կա-
 մենումէր առանց Պատ. տեղապահի ընտրութեան՝ անմիջապէս
 և որչափ կարելի է շուտով Պատրիարքի ընտրութեանը ձեռ-
 նարկել՝ հանգուցեալ Ներսէս Պատրիարքի հիւանդութեան պատ-
 ճառով առկախ մնացած կենսական խնդիրները կարգի դնելու
 համար. սակայն Օսմանեան կառավարութիւնը պահանջեց օրի-
 նական կարգաւ նախ Պատրիարքական տեղապահ ընտրել և

ապա ձեռնարկել Պատրիարքի ընտրութեան: Ազգային Վարչութիւնը փոխանակ մի ուրիշ Պատ. տեղապահ ընտրելու՝ բարեկարգաբար Պատ. փոխանորդին ճանաչել տեղապահ, և Բարձ. Գոնից ստանալով թոյլտուութիւն՝ օրինական կարգաւ ամսոյս 26-ին՝ Կարնոյ երբեմն Առաջնորդ և Երուսաղէմայ Պատրիարքական փոխանորդ Վեհապետեան Յարութիւն Արքեպիսկոպոսին ընտրեց Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսոյ:

Ի սրտէ ուրախ ենք, որ Կ. Պօլսոյ պատրիարքական Աթուրայժմ ունի իւր արժանընտիր գահակալը և շնորհաւորելով Նորին Սրբազնութեան Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոսին իւր նոր ստանձնած բարձր պաշտօնը յաջողութիւն և առողջութիւն ենք մաղթում:

Կ. Պօլսոյ Պատրիարքը Ս. Էջմիածնի ամենայն Հայոց Հայրապետի փոխանորդն է. յուսանք որ Նորին Սրբազնութիւն Յարութիւն Արքեպիսկոպոս իւր առաջին հոգսերից մինը կանէ ամրապնդել այն բարոյական և ազգային կապը՝ որ կայ ընդ մէջ Էջմիածնի և Տաճկաստանի Հայոց վարչական հաստատութեանց: Ապրիլ ամսին լինելու է ամենայն Հայոց Հայրապետի ընտրութիւնը. յուսով ենք որ Նորին Սրբազնութեան Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոսի խոհականութեան շնորհիւ կարող կըլինինք յաջող հետեւանքի սպասել մեր Տաճկաստանցի եղբարց կողմից:

Աւետելով Կ. Պօլսոյ նոր Պատրիարքի ընտրութիւնը, հարկ ենք համարում մեր ընթերցողներին ծանօթ կացուցանել այն պարագաները, որոնց հետեւանք է Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքութիւնը:

1461 թուին Սուլթան Մէհմէտ Թաթիհ առաւ Կոստանդնուպօլիս, ուր և տեղափոխեց իւր արքունիքը: Սուլթան Մէհմէտ իւր հպատակ ազգերին կամեցաւ որպէս ներկայացուցիչ մի մի ազգապետ ճանաչել. Յունաց կողմից ազգապետ էր Յունաց Կ. Պօլսոյ տիեզերական կոչեցեալ պատրիարքը. Հայոց կողմից այգպիսի մինը չըկար, ուստի և Պուրսայի Յովակիմ եպիսկոպոսին Պատրիկ կամ Պատրիարք տիտղոսով Անատոլիոյ և Յունաստանի Հայոց ազգապետ է կարգում: Այսպիսով սկսվում է Կ. Պօլսոյ պատրիարքութիւնը: Եւ ինչպէս Յունաց պատրիարքը յունադաւանների կամ, լաւ ևս քաղկեդօնի ժողովը՝ ընդունող քրիստոնէից ներկայացուցիչ էր համարվում, այնպէս ևս Հայոց պատ-

ընդհանուր բոլոր հայադաւանների և քաղկեդօնի ժողովը ջնդուհող քրիստոնեաների ներկայացուցիչ էր համարվում :

Մինչև 1830 թիւը հայ կաթողիկէներն ևս հայ պատրիարքի իրաւասութեան էին ենթարկվում , իսկ այնուհետև գաղղիացւոյ և անգլիացւոյ դեսպանների միջնորդութեամբ կաթողիկէ հայք ունեցան յատուկ ներկայացուցիչ , որով և հետզհետէ սկսեցին օտարանալ մայրենի եկեղեցուց և Հայ հասարակութիւնից՝ մինչև գիտակցութիւնը զգալ տուեց այդ պակասութիւնը և ահա այդ ժամանակ սկսուեցին Հասունեան և Հակահասունեան խռովութիւնները :

4. Պօլսոյ Հայոց պատրիարքների ընտրութիւնը մինչև սահմանադրութիւնը կատարվում էր այլ կերպ . բայց երբ հաստատուեց Տաճկաստանի Հայոց Սահմանադրութիւնը՝ ընտրութիւնը ուրիշ պայմանների ենթարկուեց : Ահա Սահմանադրութեան յօդուածները , որոնք արամադրում են պատրիարքի ընտրութեան հանգամանքները :

Գ Լ Ո Ւ Խ Ա .

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼԻՍ 1863

«Յօդ. — 1. Կոստանդնուպօլսոյ Պատրիարքը բոլոր Ազգային ժողովոց նախագահն է , և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ . և մասնաւոր պարագաներու մէջ՝ Տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է :

Աւստի պէտք է որ Պատրիարք ընտրուելու անձը՝ ընդհանուր Ազգին վստահութեան ու յարգանացն արժանի ըլլալու համար՝ Պատրիարքական Աթոռին վայելուչ ամեն յատկութիւններն ու արժանաւորութիւնն ունենայ , և ի վաղուց անտի Պատրիարքութեան յատկացեալ Եպիսկոպոսաց դասէն *) ըլլայ . միանգամայն Տէրութեան կատարեալ վստահութեանն արժանաւոր , և գոնէ իւր հօրմէն սկսեալ՝ Օսմանեան հպատակ , և երեսուն ու հինգ տարին լրացուցած ըլլայ :

Յօդ. 2. Երբ՝ Պատրիարքը վախճանելով կամ հրաժարելով և կամ ուրիշ որ և է պատճառաւ Աթոռը պարապ մնայ , Կրօնական և Քաղաքական ժողովները մէկտեղ գալով Տեղապահ մը կընտրեն , և անոր հաստատութիւնը կը խնդրեն Բարձրագոյն Գոնէն :

(*) Ս. Էջմիածնի ընդհ. Հայրապետի ձեռնադրեալ եւ ստորասեալ եպիսկոպոսներ :